



Արարատյան բակալավրիատ

Արարատյան բակալավրիատի  
ավագ դպրոցի  
Առարկայական վերջնարոյունքներ

---

Համաշխարհային պատմություն

ԱԲ-ի ստանդարտ և խորացված ուսուցման համար

*Ծրագիրը նախատեսված է 2016- 2017 թթ. քննական շրջանի համար*

# Բովանդակություն

Բովանդակություն.....	2
1 ԱԲ-ի «համաշխարհային պատմություն» առարկայի նպատակները .....	3
2 Առարկայի բովանդակությունը.....	4
3 Առարկայի գնահատման սկզբունքները .....	11
Ընթացիկ գնահատում.....	11
Ամփոփիչ գնահատում .....	11

# 1 ԱԲ-ի «համաշխարհային պատմություն» առարկայի Նպատակները

ԱԲ ծրագրի «համաշխարհային պատմության» դասընթացը նպատակ ունի զարգացնելու սովորողի պատմական մտածելակերպը, ձևավորելու և զարգացնելու պատմական գիտելիքներ, ընկալում և հմտություններ, ինչպես նաև նպաստելու սովորողների կողմից պատմության որպես գիտակարգի ընկալմանը ոչ միայն պատմագետների կողմից նույն իրադարձության մասին պատմության տարբեր մեկնաբանությունների, այլև դրանց պատճառների քննության, վերլուծության, գնահատման միջոցով: Արդյունքում ձևավորվում է պատմության հետագա ուսումնասիրության համար հիմք՝ սովորողների մոտ ձևավորելով քննական մտածողության և հետազոտական հմտություններ:

Պատմական մտածելակերպը ԱԲ-ի պատմության դասավանդման համատեքստում հմտություն է, որի շնորհիվ սովորողը կարողանում է իր համար խմբավորել անցյալի մասին ձեռք բերված տեղեկությո՞ւն՝ պատմական երևույթները նկարագրելու, համեմատելու կամ բացատրելու նպատակով: Սովորողը տալիս է պատմական հարցեր, դիտարկում է պատմական երևույթները համատեքստում, օգտագործում է փաստային գիտելիքները թեմաների հիմքային հասկացությունների և տերմինների ընկալման համար: Դասընթացի արդյունքում աշակերտը կարողանում է արտահայտել իր տեսակետը և պաշտպանել այն՝ բերելով փաստարկներ, որոնք հիմնված են անցյալի մասին տեղեկությո՞ւն հաղորդող աղբյուրների վրա:

Դասընթացի արդյունքում սովորողը կկարողանա՝

- մտաբերել, ընտրել, կազմակերպել և կիրառել դասընթացի ընթացքում ձեռք բերված իր գիտելիքները (այսինքն՝ օգտագործել պատմական փաստերը, իրադարձությունները, թվականները, գաղափարները, հասկացությունները, եզրույթները, կարևոր վիճակագրական տվյալները, օրինակները) իր գրավոր և բանավոր խոսքում:
- ցույց տալ պատմության ընկալում բացատրությունների, վերլուծությունների, հիմնավորված դատողությունների միջոցով՝ պատմական մտածողության հիմնական հասկացությունների շուրջ՝ պատճառների և հետևանքների, նույնությունների և տարբերությունների, փոփոխությունների և շարունակականության, ինչպես նաև տվյալ ժամանակաշրջանի մարդկանց շարժառիթների, նպատակների, զգացումների, արժեքների:
- հասկանալ, մեկնաբանել, վերլուծել և գնահատել պատմական աղբյուրներն իրենց համատեքստում և կիրառել դրանք որպես վկայություն բանավոր և գրավոր բացատրությունների, վերլուծությունների, դատողությունների ժամանակ, հասկանալ անցյալի մեկնաբանության և ներկայացման տարբեր եղանակները:

Առարկայական ծրագիրը կենտրոնանում է առաջին և երկրորդ աշխարհամարտերի երկարաժամկետ և կարճաժամկետ պատճառների, ինչպես նաև դրանց հաջորդող զարգացումների վրա: Ծրագրի նման թեմատիկ բաշխման հիմնական նպատակը նոր և նորագույն ժամանակներում միջազգային հարաբերությունների զարգացման առավել խոր դիտարկումն է:

## 2 Առարկայի բովանդակությունը

### ԹԵՄԱ 1: ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1871 – 1939 ԹԹ.

Թեման ուսումնասիրում է 1871-1939 թթ. միջազգային հարաբերությունները՝ կենտրոնանալով Առաջին աշխարհամարտի երկարաժամկետ և կարճաժամկետ պատճառների, Առաջին աշխարհամարտից հետո համընդհանուր խաղաղության և հավաքական անվտանգության որոնումների, դրանց իրագործման ուղղությամբ Ազգերի լիգայի գործունեության, նրա հաջողությունների ու ձախողումների, Երկրորդ աշխարհամարտի պատճառների վրա:

### Մաս 1. Միջազգային հարաբերությունները 1871-1914 թթ.

#### Ենթաթեմա

#### Վերջնադրյունք

<p>1. <b>Իմպերիալիզմը 19-րդ դ. վերջին քառորդում</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- տարբերակել 19-րդ դ. վերջին քառորդում «նոր իմպերիալիզմի» հիմնական հատկանիշները, ներկայացնել, բացատրել և վերլուծել դրա ծավալման պատճառները և տարբեր եղանակները (առևտուր, ռեսուրսների, հումքի շահագործում, ռազմավարական նկատառումներ)</li> <li>- հասկանալ և բացատրել իմպերիալիզմի դարաշրջանի հիմնական գաղափարները, ներառյալ ազգայնականություն, կայսրությունների փառաբանում, «Քրիստոնյաների առաքելություն», սոցիալ-դարվինիզմ, գնահատել դրանց ազդեցությունը ժամանակաշրջանի մարդկանց և հանրությանի վրա</li> <li>- ներկայացնել մեծ տերությունների ծավալումը Աֆրիկայում («պայքար Աֆրիկայի համար»), Ասիայում և Խաղաղ օվկիանոսում մինչև 1914 թթ., վերլուծել և գնահատել դրա ազդեցությունը միջազգային հարաբերությունների վրա</li> <li>- մեկ կամ ավելի գաղութների օրինակով դիտարկել, բացատրել և վերլուծել գաղութարար տերության դրդապատճառները, նպատակները, գաղութացման ընթացքը և եղանակները, գաղութացվողների արձագանքը և, տվյալ գաղութ(ներ)ում գաղութացման հետևանքները՝ գնահատելով տեղի ունեցած փոփոխությունների դրական և բացասական հետևանքները</li> <li>- հասկանալ, քննել, մեկնաբանել, գնահատել պատմական առաջնային և երկրորդային աղբյուրներն իրենց պատմական համատեքստում և կիրառել դրանք որպես վկայություն բանավոր և գրավոր խոսքում</li> </ul>
<p>2. <b>ԱՄՆ-ի վերածումը համաշխարհային տերության</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել 19-րդ դ. ԱՄՆ-ի մեկուսացման քաղաքականությունը և բացատրել դրա պատճառները, բացատրել «Մոնրոյի դոկտրինի» բովանդակությունը</li> <li>- ներկայացնել, բացատրել, վերլուծել 1871-1914 թթ. ավանդական մեկուսացման քաղաքականությունից ԱՄՆ շեղվելու և ծավալապաշտական արտաքին քաղաքականության անցնելու պատճառները, ընթացքը և հետևանքները</li> <li>- գնահատել առանձին իրադարձության (Իսպանա-ամերիկյան պատերազմ) և անհատների (Թ. Ռուզվելտ) դերակատարությունն ու կարևորությունը նշյալ գործընթացում</li> <li>- հասկանալ, քննել, մեկնաբանել, գնահատել պատմական առաջնային և երկրորդային աղբյուրներն իրենց պատմական համատեքստում և կիրառել դրանք որպես վկայություն բանավոր և գրավոր խոսքում</li> </ul>

<p>3. <b>Ճապոնիայի վերածումը համաշխարհային տերության</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել 19-րդ դ. առաջին կեսին Ճապոնիայի տնտեսական, ներքին և արտաքին քաղաքական իրավիճակը և կայսերական իշխանության վերականգնման նախադրյալները</li> <li>- ներկայացնել և բացատրել Մուցուհիտո կայսեր (Մեյձի) կրթական, սահմանադրական, քաղաքական, սոցիալ-քաղաքական վերափոխումները, արդյունաբերության, բանակի և նավատորմի արդիականացումը, դրանց հետևանքները</li> <li>- վերլուծել և գնահատել այդ փոփոխությունների ազդեցությունը Ճապոնիայի արտաքին քաղաքականության և միջազգային հարաբերությունների վրա՝ ներառյալ Չին-ճապոնական, ռուս-ճապոնական պատերազմները և անգլո-ճապոնական դաշինքը</li> <li>- հասկանալ, քննել, մեկնաբանել, գնահատել պատմական առաջնային և երկրորդային աղբյուրներն իրենց պատմական համատեքստում և կիրառել դրանք որպես վկայություն բանավոր և գրավոր խոսքում</li> </ul>
<p>4. <b>Դաշինքների համակարգի ստեղծումը Եվրոպայում</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել, բացատրել և վերլուծել Եվրոպական մեծ տերությունների նպատակներն ու խնդիրները, նրանց միջև մրցակցության ու հակամարտության ներքին և արտաքին պատճառները</li> <li>- ներկայացնել և բացատրել Եվրոպայում դաշինքների համակարգի ստեղծման ընթացքը, Եռյակ դաշինքի և Եռյակ միության ձևավորումը</li> <li>- բացատրել և վերլուծել բալկանյան տարածաշրջանային հակամարտության վերածումը Առաջին աշխարհամարտի</li> <li>- վերլուծել և գնահատել տարբեր գործոնների (նացիոնալիզմ, իմպերիալիզմ, դաշինքներ, ռազմական ծրագրեր, սպառազինությունների մրցավազք, իմպերիալիստական մրցակցություն) ազդեցությունը Առաջին աշխարհամարտի սանձազերծման գործում</li> <li>- հասկանալ, քննել, մեկնաբանել, գնահատել պատմական առաջնային և երկրորդային աղբյուրներն իրենց պատմական համատեքստում և կիրառել դրանք որպես վկայություն բանավոր և գրավոր խոսքում</li> </ul>

**Մաս 2. Միջազգային հարաբերությունները 1918-33 թթ.**

<p>5. <b>Փարիզի համաժողովը. 1919-20 թթ. խաղաղության դաշնագրերը</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել, բացատրել, վերլուծել այն ակնկալիքները, որոնք Մեծ տերությունները (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա) և պարտված Գերմանիան ունեին Փարիզի համաժողովից</li> <li>- ներկայացնել պարտված պետությունների հետ կնքված դաշնագրերը՝ Վերսալի, Սեն Ժերմեն ան Լեի, Նեյ Սյուր Սենի և Սևրի, և վերլուծել դրանց հետևանքները</li> <li>- ներկայացնել և վերլուծել Վերսալի դաշնագրի վերաբերյալ տարբեր գնահատականները և հիմնավորված դատողություններ կատարել դաշնագրի «անարդարացիության» կամ «արդարացիության» վերաբերյալ</li> <li>- հասկանալ, քննել, մեկնաբանել, գնահատել պատմական առաջնային և երկրորդային աղբյուրներն իրենց պատմական համատեքստում և կիրառել դրանք որպես վկայություն բանավոր և գրավոր խոսքում</li> </ul>
--	--

<p>6. Ազգերի լիզան և նրա գործունեությունը 1920-ական թթ.</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել ԱԼ-ի կանոնադրական նպատակները, դրանց իրագործման համար ԱԼ-ի կանոնադրությամբ նախատեսված միջոցները, ԱԼ-ի կառուցվածքը, վերլուծել դրանց ուժեղ և թույլ կողմերը</li> <li>- ներկայացնել ԱԼ-ի գործունեությունը 1920-ական թթ., գնահատել նրա հաջողություններն ու անհաջողությունները</li> <li>- համեմատել արձանագրված արդյունքները և Կանոնադրական նպատակները և հիմնավորված դատողություններ կատարել 1920-ական թթ. ԱԼ-ի գործունեության վերաբերյալ (ԱԼ-ի գործունեությունը 1920-ական թթ.կարող է գնահատվել իբրև հաջողություն, թե՛ ձախողում)</li> <li>- հասկանալ, քննել, մեկնաբանել, գնահատել պատմական առաջնային և երկրորդային աղբյուրներն իրենց պատմական համատեքստում և կիրառել դրանք որպես վկայություն բանավոր և գրավոր խոսքում</li> </ul>
<p>7. Միջազգային հարաբերությունների բարելավման փորձերը 1922-33 թթ.</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել նշյալ ժամանակահատվածում գումարված միջազգային համաժողովները և կնքված դաշնագրերն ու համաձայնագրերը (այդ թվում Վաշինգտոնի, Ջենովայի, Ռապալոյի, Լոկարնոյի, Կելոգ-Քրիանի, Լիտվինովի, Լոնդոնի, ինչպես նաև Դոուեսի և Յանգի պլանները), բացատրել այն խնդիրները, որոնց շուրջ գումարվել էին այդ համաժողովները և վերլուծել ընդունված որոշումների հետևանքները՝ գնահատելով դրանց արդյունավետությունը</li> <li>- հասկանալ, քննել, մեկնաբանել, գնահատել պատմական առաջնային և երկրորդային աղբյուրներն իրենց պատմական համատեքստում և կիրառել դրանք որպես վկայություն բանավոր և գրավոր խոսքում</li> </ul>
<p><b>Մաս 3. Տնտեսական մեծ ճգնաժամը և միջազգային հարաբերությունները. դեպի Երկրորդ աշխարհամարտ տանող ճանապարհը</b></p>	
<p>8. Տնտեսական մեծ ճգնաժամի ազդեցությունը միջազգային հարաբերությունների վրա</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել և բացատրել Տնտեսական մեծ ճգնաժամի պատճառներն ու հետևանքները</li> <li>- վերլուծել Տնտեսական մեծ ճգնաժամի տնտեսական և քաղաքական ազդեցությունը միջազգային խաղաղության և հավաքական անվտանգության վրա</li> <li>- հասկանալ, քննել, մեկնաբանել, գնահատել պատմական առաջնային և երկրորդային աղբյուրներն իրենց պատմական համատեքստում և կիրառել դրանք որպես վկայություն բանավոր և գրավոր խոսքում</li> </ul>
<p>9. Մանչուրիայի ճգնաժամը և հավաքական անվտանգության ձախողումը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել Մանչուրիայի ճգնաժամը, բացատրել դրա պատճառներն ու հետևանքները</li> <li>- ներկայացնել Մեծ տերությունների արձագանքը Ճապոնիայի ագրեսիվ արտաքին քաղաքականությանը և վերլուծել դրա պատճառները՝ Մեծ տերությունների արտաքին քաղաքականության համատեքստում</li> <li>- վերլուծել ճգնաժամի դերակատարությունը հավաքական անվտանգության և Ազգերի լիգայի ձախողման հարցում</li> <li>- հասկանալ, քննել, մեկնաբանել, գնահատել պատմական առաջնային և երկրորդային աղբյուրներն իրենց պատմական համատեքստում և կիրառել դրանք որպես վկայություն բանավոր և գրավոր խոսքում</li> </ul>

<p>10. Մուսուլիսիի արտաքին քաղաքականությունը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել Մուսուլիսիի և նրա ղեկավարած ֆաշիստական կուսակցության գաղափարախոսությունը, նրանց իշխանության գալու ընթացքը և պատճառները</li> <li>- ներկայացնել, բացատրել, համեմատել Մուսուլիսիի արտաքին քաղաքականությունը 1923-34 թթ. և 1934 թ. հետո, վերլուծել դրա պատճառները և հետևանքները</li> <li>- վերլուծել Եթովպիայի ճգնաժամի հետևանքներն ու դերակատարությունը հավաքական անվտանգության և Ազգերի լիգայի ծախողման հարցում</li> <li>- հասկանալ, քննել, մեկնաբանել, գնահատել պատմական առաջնային և երկրորդային աղբյուրներն իրենց պատմական համատեքստում և կիրառել դրանք որպես վկայություն բանավոր և գրավոր խոսքում</li> </ul>
<p>11. Հիտլերի արտաքին քաղաքականությունը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել Հիտլերի և նրա ղեկավարած Նացիոնալ-սոցիալիստական կուսակցության գաղափարախոսությունը, նրանց իշխանության գալու ընթացքը և պատճառները</li> <li>- ներկայացնել, բացատրել Հիտլերի արտաքին քաղաքականությունը 1934-38 թթ., վերլուծել արտաքին քաղաքական նպատակներին հասնելու նրա ռազմավարությունը, Սաարի վերադարձի, Հռենոսյան շրջանի վերառազմականացման և Ավստրիայի միակցման հետևանքները</li> <li>- ներկայացնել և վերլուծել Հիտլերի արտաքին քաղաքական նպատակների վերաբերյալ տարբեր գնահատականները և հիմնավորված դատողություններ անել այն մասին, թե արդյո՞ք նա ի սկզբանե ծրագրում էր մեծ պատերազմ</li> <li>- ներկայացնել, բացատրել, վերլուծել, գնահատել խաղաղեցման քաղաքականությունը և դրա հետևանքները, ներկայացնել և վերլուծել խաղաղեցման քաղաքականության տարբեր գնահատականները</li> <li>- ներկայացնել Հռոմ-Բեռլին-Տոկիո առանցքի ստեղծումը, Խորհրդա-գերմանական պայմանագիրը, բացատրել կողմերի նպատակներն ու շահերը, վերլուծել դրանց նշանակությունն ու ազդեցությունը</li> <li>- ներկայացնել, բացատրել և վերլուծել Երկրորդ աշխարհամարտի երկարաժամկետ և կարճաժամկետ պատճառները</li> <li>- հասկանալ, քննել, մեկնաբանել, գնահատել պատմական առաջնային և երկրորդային աղբյուրներն իրենց պատմական համատեքստում և կիրառել դրանք որպես վկայություն բանավոր և գրավոր խոսքում</li> </ul>

**ԹԵՄԱ 2: ԱՄԲՈՂՋԱՏԻՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՎԱՐԳԵՐՆԵՐ ԵՎ ՌՈՍՏՐԱՅՈՒՄ 1918-1941 թթ.**

Թեման ուսումնասիրում է 1918-41 թթ. Եվրոպայում ԽՍՀՄ-ում (Լենինի և Ստալինի կառավարման շրջանում), Խտալիայում (Մուսոլինիի կառավարման շրջանում) և Գերմանիայում (Հիտլերի կառավարման շրջանում), հաստատված ամբողջատիրական վարչակարգերը:

**Ենթաթեմա**

**Վերջնադրյունք**

1. **Լենինը և Ռուսաստանը, 1918-24 թթ.**

- ներկայացնել Լենինի քաղաքական ուղին և նրա գաղափարախոսության հիմնադրույթները, համեմատել մարքսիստական գաղափարախոսության հետ, վերլուծել Լենինի և բոլշևիկյան կառավարության սահմանած նպատակների իրականացման ռազմավարությունը
- քննության ենթարկել 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո բոլշևիկյան կառավարության կողմից իշխանության պահպանման և կենտրոնացման ուղղությամբ ձեռնարկված քայլերը
- բացատրել քաղաքացիական պատերազմում բոլշևիկների հաղթանակի պատճառները և Տրոցկու դերակատարությունն այդ հաղթանակում
- ներկայացնել ԽՍՀՄ ստեղծման ընթացքը, վերլուծել Լենինի և բոլշևիկների ազգային քաղաքականությունը
- քննության ենթարկել Լենինի և բոլշևիկյան կուսակցության կողմից պետության կյանքի բոլոր ոլորտների նկատմամբ վերահսկողության հաստատման միջոցներն ու եղանակները
- ներկայացնել 1918-24 թթ. Լենինի և բոլշևիկյան կուսակցության տնտեսական քաղաքականությունը (ռազմական կոմունիզմ, ՆԷՊ), բացատրել դրա նպատակները և իրականացման միջոցները, վերլուծել տնտեսական, սոցիալական և քաղաքական հետևանքները
- գնահատել Լենինի և նրա կառավարման շրջափուլի դերակատարությունը ԽՍՀՄ պատմության համատեքստում
- հասկանալ, քննել, մեկնաբանել, գնահատել պատմական առաջնային և երկրորդային աղբյուրներն իրենց պատմական համատեքստում և կիրառել դրանք որպես վկայություն բանավոր և գրավոր խոսքում

2. **Ստալինը և Ռուսաստանը, 1924-1941 թթ.**

- ներկայացնել 1924-29 թթ. իշխանության համար Ստալինի պայքարի հիմնական փուլերը, բացատրել և վերլուծել, թե ինչու և ինչպես նրան հաջողվեց դառնալ ԽՍՀՄ առաջնորդ
- վերլուծել գաղափարախոսության դերակատարությունը Ստալինի քաղաքական առաջընթացում, համեմատել ստալինիզմը մարքսիզմի և լենինիզմի հետ
- ներկայացնել Ստալինի տնտեսական քաղաքականությունը, բացատրել դրա պատճառներն ու նպատակները, գնահատել դրական և բացասական հետևանքները
- ներկայացնել Ստալինի իշխանության պահպանման, կենտրոնացման, պետության կյանքի բոլոր ոլորտների նկատմամբ վերահսկողության հաստատման ուղիները, բացատրել բռնաճնշումների և Մեծ տեռորի պատճառները, հիմնական փուլերը, գնահատել դրանց հետևանքները
- ներկայացնել Ստալինի անձի պաշտամունքը և վերլուծել ստալինիզմի ազդեցությունը կրթության, երիտասարդության և արվեստի վրա



	<ul style="list-style-type: none"> <li>- քննության ենթարկել կանանց կարգավիճակը Ստալինի կառավարման տարիներին, կրոնի և ազգային փոքրամասնությունների նկատմամբ նրա քաղաքականությունը</li> <li>- գնահատել Ստալինյան շրջափուլը ԽՍՀՄ պատմության համատեքստում</li> <li>- հասկանալ, քննել, մեկնաբանել, գնահատել պատմական առաջնային և երկրորդային աղբյուրներն իրենց պատմական համատեքստում և կիրառել դրանք որպես վկայություն բանավոր և գրավոր խոսքում</li> </ul>
<p>3. <b>Գերմանիան Ադոլֆ Հիտլերի կառավարման ներքո, 1929-1941 թթ.</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել 1918 թ. հետո հետպատերազմյան Գերմանիայի հիմնախնդիրները, բացատրել Վայմարյան Գերմանիայի քաղաքական և տնտեսական դժվարությունների պատճառները,</li> <li>- ներկայացնել Ա.Հիտլերի առաջընթացի սկիզբը, նրա քաղաքական իդեալները և նպատակները, Նացիոնալ-սոցիալիստական կուսակցության գաղափարախոսությունը, 1923 թ.Մյունխենյան խռովությունը, վերլուծել «Մայն Կամպֆուն» արտահայտված հիմնական գաղափարները,</li> <li>- բացատրել Տնտեսական մեծ ճգնաժամի ազդեցությունը Գերմանիայի վրա, Հիտլերի քաղաքական առաջընթացը և իշխանության կենտրոնացումը 1933-34 թթ., վերլուծել նրա քաղաքական ռազմավարությունը,</li> <li>- բացատրել մինչև 1941 թ. Հիտլերի ներքաղաքական նպատակները և դրանց իրագործման եղանակները, վերլուծել ներքաղաքական կյանքի վերահսկման հիմնական եղանակները, գնահատել քարոզչության դերակատարությունը նացիստական գաղափարախոսության տարածման գործում</li> <li>- հասկանալ, քննել, մեկնաբանել, գնահատել պատմական առաջնային և երկրորդային աղբյուրներն իրենց պատմական համատեքստում և կիրառել դրանք որպես վկայություն բանավոր և գրավոր խոսքում</li> </ul>

<p><b>Թեմա 3: ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԳՄ 1941 – 1950 թթ.</b></p>	
<p>Թեման ուսումնասիրում է 1941-50 թթ.Սառը պատերազմի ծագումն ու ծավալումը, ինչպես նաև դրա վերաբերյալ պատմագիտական տարբեր մոտեցումներն ու մեկնաբանությունները:</p>	
<p><b>Ենթաթեմա</b></p>	<p><b>Վերջնադրույունք</b></p>
<p>1. <b>Սառը պատերազմի ծագումը, 1917-45 թթ.</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- վերլուծել գաղափարախոսական հակասությունները կողմերի միջև և գնահատել դրանց դերակատարությունը Սառը պատերազմի սանձազերծման գործում</li> <li>- ներկայացնել ԽՍՀՄ արտաքին քաղաքականությունը 1917-41 թթ.և վերլուծել, թե որքանով էր այն միտված Առաջին աշխարհամարտում կորցրած տարածքների վերականգնմանը</li> <li>- ներկայացնել ԽՍՀՄ, ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի միջև դաշինքը 1941-45 թթ. և վերլուծել, թե որքանով էին այս պետությունների նպատակներն ու նկրտումները հակասական, ներկայացնել դաշնակիցների հարաբերությունները 1943-44 թթ., վերլուծել, թե Եվրոպայի ազատագրումը 1943-45 թթ.որքանով նպաստեց դաշնակիցների միջև անվստահության և հակասությունների սրմանը</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>- հասկանալ, քննել, մեկնաբանել, գնահատել պատմական առաջնային և երկրորդային աղբյուրներն իրենց պատմական համատեքստում և կիրառել դրանք որպես վկայություն բանավոր և գրավոր խոսքում</li> </ul>
<p>2. <b>Դաշնակցությունից հակամարտություն, 1945-47 թթ.</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել Երկրորդ աշխարհամարտից հետո դաշնակիցների միջև հակասությունների սրումը, բացատրել և վերլուծել դրա քաղաքական, տնտեսական և գաղափարական պատճառներն ու հետևանքները</li> <li>- ներկայացնել և վերլուծել Չերչիլի «Երկաթյա վարագույրի ճառը», Թրումենի դոկտրինը և Մարշալի պլանը, գնահատել, թե որքանով էին դրանք միտված ԽՍՀՄ հզորության զսպմանը</li> <li>- գնահատել պետությունների առաջնորդների դերակատարությունը Սառը պատերազմի սանձազերծման գործում</li> <li>- ներկայացնել Գերմանիայի և Եվրոպայի բաժանումը 1948-52 թթ., ՆԱՏՕ-ի և Վարշավյան միության ստեղծումը, վերլուծել դրանց նպատակները և գործունեությունը</li> <li>- հասկանալ, քննել, մեկնաբանել, գնահատել պատմական առաջնային և երկրորդային աղբյուրներն իրենց պատմական համատեքստում և կիրառել դրանք որպես վկայություն բանավոր և գրավոր խոսքում</li> </ul>
<p>3. <b>Սառը պատերազմի ծագումն ըստ պատմագիտական մեկնաբանությունների</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել, քննության ենթարկել, վերլուծել, գնահատել Սառը պատերազմի ծագման վերաբերյալ ավանդական, ռեվիզիոնիստական և հետռեվիզիոնիստական մոտեցումները</li> <li>- ներկայացնել, քննության ենթարկել, վերլուծել, գնահատել Սառը պատերազմի վերաբերյալ խորհրդային և արևմտյան պատմագիտության տարբեր մեկնաբանությունները</li> <li>- ներկայացնել, քննության ենթարկել, վերլուծել, գնահատել սառը պատերազմի վերաբերյալ արդի մոտեցումներն ու մեկնաբանությունները</li> </ul>

### 3 Առարկայի գնահատման սկզբունքները

ԱԲ-ի համաշխարհային պատմության ընթացիկ և ամփոփիչ քննությունները պետք է ստուգեն սովորողի կարողությունները երկու հիմնական ուղղությամբ:

#### Ա. Գիտելիք և ըմբռնում

Աշակերտները պետք է ցուցաբերեն գիտելիքներ և ըմբռնում հետևյալ ասպարեզներում.

- վերհիշել, ընտրել և նպատակային օգտագործել պատմական տեղեկույթը.
- բացատրության, վերլուծության և փաստարկված եզրահանգման միջոցով ցուցադրել այնպիսի հիմքային հասկացությունների տիրապետում, ինչպիսին են պատճառահետևանքային կապը, շարունակականությունը, փոփոխությունները և նշանակալիությունը՝ կախված պատմական համատեքստից:

#### Բ. Վերլուծություն, գնահատում և կիրառություն

Աշակերտները պետք է կարողանան՝

- իրականացնել պատմական ուսումնասիրություն, որպես ուսումնասիրության մաս վերլուծել և գնահատել մի շարք սկզբնաղբյուրներ և պատմական նյութեր.
- ելնելով պատմական համատեքստից՝ վերլուծել և գնահատել, թե ինչու են անցյալում կատարված գործընթացները տարբեր կերպ մեկնաբանվել ու ներկայացվել:

### Ընթացիկ գնահատում

Աշակերտներն ընթացիկ գնահատվում են մասնակցության, տնային աշխատանքի և ընթացիկ քննական աշխատանքների համար:

Մասնակցության գնահատականը հիմնվում է աշակերտների՝ դասապրոցեսում ներգրավվածության և ներդրման վրա: Տնային աշխատանքները և մասնակցությունը գնահատվում են ըստ ձևավորող գնահատման սկզբունքի:

Աշակերտները յուրաքանչյուր կիսամյակի ավարտին հանձնում են միջանկյալ քննական աշխատանք: Յուրաքանչյուր աշխատանք նախատեսված է 90-110 րոպեի համար և կազմված է ծանոթ և անծանոթ սկզբնաղբյուրների հետ աշխատանքից, թեմայի ազատ շարադրանքից, համեմատական վերլուծությունից: Առարկայի ամբողջ ուսումնական շրջանում աշակերտները հանձնում են 5 ընթացիկ քննական աշխատանք:

Ընթացիկ գնահատման բաղադրիչների հարաբերակցությունը հետևյալն է՝ մասնակցություն՝ 20%, տնային աշխատանք՝ 20% և քննական աշխատանք՝ 60%:

### Ամփոփիչ գնահատում

Գնահատման վերոնշյալ սկզբունքները նշված չեն առարկայի բովանդակության մեջ որպես որոշակի թեմային հատուկ վերջնարդյունքներ: Նշված հմտությունները քննության ընթացքում ստուգվելու են անծանոթ տեքստերի և նյութերի հիման վրա:

Ստորև ներկայացված աղյուսակն ընդհանրական պատկերացում է տալիս գնահատման սկզբունքների և քննական բաղադրիչների հարաբերակցության մասին:

Գնահատման սկզբունքը	Կշիռը (%)
Ա. Գիտելիք և ըմբռնում	60
Բ. Վերլուծություն, գնահատում և կիրառություն	40

Դասավանդման պլանավորում կատարելիս ուսուցիչները պետք է հաշվի առնեն, որ քննական ընդհանուր միավորի մեջ մեծ կշիռ (40%) պիտի ունենան հմտությունները (ներառյալ տեղեկույթի հետ աշխատանքը, վերլուծությունն ու գնահատումը): Ուսուցիչները դասապլանները մշակելիս և ընթացիկ ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է հաշվի առնեն այս հարաբերակցությունը: